

Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետի

խորհրդի նիստի, կայացած 2017թ.մարտի 29-ին

- Օրակարգ՝ 1. Ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին ամբիոնների վարիչների հաղորդումները:
2. Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ, քիմ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Շ.Ա.Մարգարյանի և քիմ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Կ.Ռ.Գրիգորյանի կողմից ներկայացված «Մոլեկուլային ֆլուորեսցենցիայի հիմունքները» վերնագրով ուսումնական ձեռնարկի քննարկման և տպագրման մասին:
3. Թեկնածուական ատենախոսությունների վերնագրերի և ղեկավարների հաստատում:
4. Ընթացիկ հարցեր:

1.Խորհրդի նախագահ Տ.Վ. Ղռչիկյան.

-Ներկայացնեմ այսօր մեր նիստում քննարկվող հարցերը:

Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքները: Ամբիոնի վարիչները թող հակիրճ ներկայացնեն իրենց ամբիոններում տիրող վիճակների մասին:

-Ելույթ ունեցան ամբիոնի վարիչները՝ աշխատանքներն ընթանում են նորմալ հունով և ձևակերպման փուլում են: Միայն անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնում Ֆարմացիայի ինստիտուտի հեռակա V-րդ կուրսի 1 ուսանող չի ներկայացել, որի մասին տեղյակ է պահվել:

2. Խորհրդի նախագահ Տ.Վ. Ղռչիկյան.

Ներկայացնեմ Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ, քիմ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Շ.Ա.Մարգարյանի և քիմ.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Կ.Ռ.Գրիգորյանի

կողմից ներկայացված «Մոլեկուլային ֆլուորեսցենցիայի հիմունքները» վերնագրով ուսումնական ձեռնարկի քննարկման և տպագրման մասին հարցը: Առկա է ամբիոնի քաղվածքը, և երկրորդ փուլի գրախոսությունները ներկայացված են՝ կենս.գիտ.դոկտոր, պրոֆեսոր Պ.Հ.Վարդևանյանի և պրոֆեսոր Ե.Բ.Դայանի կողմից: Կարծիքները խիստ դրական են: Գրախոսներն երաշխավորում են ներկայացված ձեռնարկը տպագրության:

Որոշեցին – (Միաձայն քվեարկության արդյունքում): Հաշվի առնելով վերոհիշյալ աշխատանքի անհրաժեշտությունը ուսումնական գործընթացի բարելավման համար, այն թույլատրել տպագրության (100 օրինակ տպաքանակով), համալսարանի միջոցների հաշվին:

3. Խորհրդի նախագահ Տ.Վ. Ղոչիկյան.

Ֆակուլտետի գիտական խորհուրդը պետք է հաստատի <Անօրգանական և անալիտիկ քիմիայի> ամբիոնի ասպիրանտ Համիդե Ահմադ Մահմուդի Դեհսիտորանիի (ասպիրանտուրա ընդունված 30.09.2016) և նույն ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Մարիետա Կարենի Զաքարյանի (ասպիրանտուրա ընդունված 15.11.2016) թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատման հարցը: Ամբիոնում քննարկել են վերոհիշյալ ասպիրանտների ատենախոսությունների վերնագրերի և ղեկավարի հարցը, այժմ մենք պետք է հաստատենք:

- 1) Համիդե Ահմադ Մահմուդի Դեհսիտորանի համար ամբիոնի առաջարկել է – “ Պղնձի օքսիդային թափոնների վերամշակում ԲԻՍ պրոցեսների միջոցով և դրանց բնութագիրը” վերնագրով թեման: Ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, քիմ.գիտ դոկտոր, պրոֆեսոր – Ս.Լ.Խառատյան
- 2) Մարիետա Կարենի Զաքարյանի համար ամբիոնի առաջարկել է – “W-մետաղներ (Cu, Ni, Ag) կեղծ համաձուլվածքների և սիլիցումի ստացում՝ թթվածնավոր միացությունների մագնեզիումակարբոթերմ վերականգնմամբ” վերնագրով թեման: Ղեկավար ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, քիմ.գիտ դոկտոր, պրոֆեսոր – Ս.Լ.Խառատյան

Որոշեցին – Գիտական խորհուրդը միաձայն որոշեց հաստատել վերոհիշյալ ասպիրանտների ատենախոսության վերնագրերը և գիտական աշխատանքների ղեկավար հաստատել ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, քիմ.գիտ դոկտոր, պրոֆեսոր Ս.Լ.Խառատյանին:

4. Ֆակուլտետի ղեկան, պրոֆեսոր Տ.Վ.Ղոչիկյան

Ֆակուլտետը ստացել է հետևյալ շրջափերականը, որտեղ նշված է, որ Ազգ-բանակ գաղափարի շրջանակներում, պարտադիր զինվորական ծառայություն չանցած մինչև 40 տարեկան երկու ներկայացուցիչ պետք է մասնակցեն դասընթացին: Դասընթացները անցկացվելու են ՀՀ ՊՆ Նուբարաշենի ուսումնական կենտրոնում՝ շաբաթական 1 անգամ (շաբաթ օրերին, ժամը 9⁰⁰-13⁰⁰), 1ամիս տևողությամբ: Ապրիլի 8-ին, 15-ին, 22-ին և 29-ին:

Որոշեցին - Ազգ-բանակ գաղափարի շրջանակներում ֆակուլտետի կողմից առաջադրել են “Անօրգանական և անալիտիկ քիմիայի” ամբիոնից Հայկ Ալեքսանի Բեգլարյանի և “Ֆիզիկական և կոլոիդային քիմիայի” ամբիոնից Զաքար Պապանյանի թեկնածությունները: Որոշումն ընդունվեց միաձայն:

Խորհրդի նախագահ՝

Ք.գ.դ, պրոֆեսոր

Տ.Վ. Ղոչիկյան

Գիտ. քարտուղար՝

Ք.գ.թ., ասիստենտ

Մ.Ա.Սամվելյան